

ԱՅՅ ՄԸ ԿՐԱՓՓԱՅԻՆ 1959

Ա.

Կրափիա, '25էն ի վեր կը ճանչնամ քեզ,
Տարուէ տարի, սիրտս, թեւ առ թեւ,
Ստորոտէդ հասաւ մինչեւ բարձունքդ,
Ուր, անկրկնելի ալափոխութեան մը մէջ տեսայ
Եօթանասուներկու մաքառումներուդ հրեղէն հետքերը.
Փխւէն յարաշարժ, այլ դուն միշտ անշարժ,
Կո՛ւրճ տուիր Բոնրատի, Բրոսի, Յոն Պիլովի բանակներուն.
Ամէն անգամ որ կ'այցելեմ քեզի,
Զաւակներդ է որ կը տեսնեմ անսանձելի դրոշի մէջ,
Որոնք ի մի շաղախեալ ռազմին, հողմին եւ կայծակին,
Կը հալածեն Բոնրատը, Բրոսն ու Յոն Պիլովը:

Բ.

Այսօր մութ ես, ամպերով ծանրաբեռն.
Պասաանոյի դաշտն ու երկինքը, եւ Պրենթան
Պարուրուած են անդունդի մէջ ծաղկած լոյսով մը.
Մերթ ընդ մերթ, հարաւէն հիւսիս,
Որոտումը կը գլորտկի շառաչուն կառքի մը պէս,
Ու այն ատեն, հողւոյս մէջ, կ'արթննայ անցեալը,
Կը լսեմ վրնջիւնը երիւարներուն,
Եւ պայթումը թնդանօթին, կաղկանձիւնը գէնքերուն,
Որոնց պլլումը, անդրդուելի եւ յամառ,
Կ'իյնան կողք կողքի քսանամեայ հերոսներդ.
Այսօր մութ ես, ամպերով ծանրաբեռն:

Գ.

Կանգնած դազաթիզ, չնչելով օդդ,
Դիտելով վերեւ տարածուող անհունը,
Եւ մեծ արեղակը մեծ երկնքիդ վրայ,
Կը յիշեմ '43ի Սեպտեմբերեան օրերը,
Երբ փապարներուդ մէջ, հրաղէն ի ձեռին,
Երբ ժաշուերուդ ետին, առջեւ եւ կողքին,
Ըմբոսաներդ կ'ողորէին կենաց եւ մահու ճամբուն վրայ,
Մինչ Գերմանը, փխթոյ մաշինը կուրծքին,
Կը կարծէր լեցնել Ազատութեան Երգը,
Ազատութեան Ե՛րգը, որ որոտման մը հանգոյն
Իջնելով քեզմէ՝ կ'ողողէր ողջ Իտալիան:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Կրափիա, Փիաւէ. - Իտալիոյ սրբազան լեռն ու գետը:

ԸՆԴՈՒՆԱՅՆ ԾՓԱՆՔ

Սիրտ իմ անհուն, անչափելի խորութիւն,
Հէգ ուղեւոր՝ անտառին մէջ կը քերուն,
Անծիր, անափ հորիզոններ կ'երկարին,
Յոյսիս ծաղկեալ կատարներէն ալ անդին:

Երբոր կոխեմ բարձունքին վրայ երազիդ,
Աչքըս իսկոյն կ'ըլլայ անդունդ խորափիտ,
Ուր ամէն ինչ կը մեռնի, ցուրտ եւ անգոյն,
Եւ դուն դադաղ մը կը տանիս դէպի տուն:

Այո՛, ամէն ինչ կը մեռնի, սէր, հաճոյք.
Բայց մոխիրին տակ յարաճուն եւ անմահ,
Վերածաղկեալ նոր տենչանքներ անըստոյդ.

Փակուած դըռնակդ կը բախեն ակամայ,
Եւ բաւիղիդ մէջ բանտըւած կոյր գերի,
Զեռ փընտրուեր ոչ իսկ ելքի մը ճամբայ:

ԳԱՐՆԱՆ ՀՈՎԵՐ

Ո՛վ միղամած եւ տրամաճեւ բընութիւն,
Անանային ողբերգութիւն միալար,
Ուր չըկայ ո՛չ իսկ անձրեւի քաղցրութիւն,
Խուլ ցաւերու թուխ ամպերէն գէպի վար:

Կը կողկողիմ անհորիզոն անձուկով,
Զերդ վանդակի մէջ բանտըւած հէգ թըռչուն,
Հողիս միայն գորշ պատրանքներ գրկելով՝
Կը խարխափի մըլուշին մէջ թափառուն:

Գարնա՛ն արեւ, դարնա՛ն հովեր թեւապար,
Եկէք փըշել հողւոյս վըրայ վերստին,
Անուրջի թոյլ շրջարշով դիւ հեղարար

Պարուրելու, առանց ցաւի խորհուրդին,
Սիրտըս անգամ մ'ալ գըզուելով մայրօրէն,
Եւ տալով ուժպ մը սիրոյ ջերմ աղբիւրէն:

ԿՈՅՐ ՎԱԶՔ

Հողազանդուած, այլ տենչանքով կենսավառ,
Ծարաւահիւծ դէպի աղբիւրն Երազին
Կորաքամակ կ'երթան, կ'երթան հեւասպառ,
Վըտիտ մարդիկ՝ նոր բաժակներ ձեռքերին:

Անոնք, կեանքին ուխտադիրներն անվրկանդ,
Կ'իյնան ճամբուն վըրայ խոնաւ եւ տըղմուտ,
Ու թէեւ թոյլ, անգոր ծունկով եւ հիւանդ,
Բայց կը վազեն փընտըռելով նոր յագուրդ:

Ո՛հ, քանինք սիրոյ կարմիր նիզակէն
Արինազանդ առած վէրքեր ահարկու,
Մահուան մէջ իսկ նոր յարութեան տենչալէն՝

Կը մըտնեն մութ անտառն անդարձ եւ յաղթկու,
Յոյսի ջահն իբր առաջնորդ կոյր քայլերնուն՝
Կեանքի հացէն դեռ պատառ մ'ալ կըծելու:

ՆՈՐ ԱՇԽԱՐՀ ՄԸ

Աստղերուն տակ լուսածոր
Հողիս ումպ ումպ կ'արբենայ,
Անդորրութեամբ երկնաւոր,
Յուրացումէն արծաթեայ:

Կ'ուզեմ հանգչիլ անձանձիր,
Թօթափած բեռն հողերուս,
Մոռնալ աշխարհը նանիր,
Եւ սուտ սէրերն յորդայոյդ:

Կ'ուզեմ գրկել տենդահար
Նոր աշխարհին նոր ափեր,
Աշխարհ՝ զոր ես տեսլարար

Կը ստեղծեմ միշտ անտարբեր,
Առանց ետիս նայելու,
Եւ կուլ տալով սարսուռներ:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

● ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ●

ԴՈՒԻՆ ՔԱՂԱՔԸ ԵՒ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵ-
ՐԸ: Գրեց Կ. Ղաֆաղարեան: Լաքա-
կազմ, Բաղաձալ, 300 էջ, 234 գումա-
ւոր եւ անգոյն նկարներով: Հրատ.
Երեւան, 1952: Գին՝ 21 ռուբլի:

Երեւանի ՀՍՍՌ Գիտութիւններին Ակա-
դեմիայի հրատարակած մեծարժէք գոր-
ծերէն է Կ. Ղաֆաղարեանի այս փընտ-
ռուած հատորը: 2000 օրինակ տպուած
այս գործն ալ այժմ սպառած եւ դժուար
գտնուելիք հատորներու շարքին է:

Ղաֆաղարեանի այս գործը նուիրուած
է բոլորովին՝ գրեթէ օրը օրին՝ պատմու-
է թեան պեղումներու, որ կատարուած են
1937էն ի վեր (մինչեւ 1950): Այս պե-
ղումները կ'երեւայ թէ դեռ կը շարու-
նակուին:

Հեղինակը մեզի տալէ վերջ միտի եւ
չահեկան յառաջարան մը, կ'աւելցնէ
հմտալից ներածական մը Դուինի (Դարիլ)
անուան ստուգարանութենէն սկսելով:
Առաջին գլուխով կը ներկայացուն «Քա-
ղաքի աւերակները». մանրապատում
կարագրութիւն, ճոխացած տեղագրական
նկարներով եւ դժառնատակներով:

Երկրորդ գլուխով կը սկսի նկարագրու-
թիւնը եւ հաշուետուութիւնը Դուինի պե-
ղումներուն: Կը խօսի փրոֆ. Նիկ. Մառի
պեղումներէն (1899) սկսելով, որոնք
մասնակի հանգամանք ունէին: Յետոյ
նաշիկ վըղ. Դադեանի պեղումները՝
1904, 1907 եւ 1908 թուականներուն: Կա-
նոնաւոր պեղումներու, գիտական ձեւով,
հաղիւ 1936ին կը ձեռնարկուի, եւ նախ-
կին սխալներէ օգտուելով՝ 1938ին հաս-
տատ հիմերու վըրայ կը գրուին գիտական
պեղումները եւ նոր թափով կը շարու-
նակուին:

Երրորդ գլուխով կը տրուին «Քաղաքի
ճարտարապետական կառուցումները».
ճոխ լուսանկարներով եւ ճարտարապե-

տական վերակառուցումներու յատակա-
գիծերով եւ դժադրութիւններով:

Չորրորդ գլուխը բնական է ամէնէն
չահեկաններէն մէկն է. «Գտնուած ա-
ռարկաները»: Այս մասին թող ներուի
ինծի քիչ մը ծանրանալու: Ղաֆաղա-
րեան կը գրէ. «Տնային պղնձէ կարասի-
ներ՝ կաթսայ, լանդառ, պղնձէ պուտուկ,
քամիչ եւ այլ առարկաներ բոլորովին չեն
գտնուել եւ հաւանաբար Դուինի հին բը-
նակիչները չեն էլ գործածել, որովհետեւ
այդ առարկաներն իրենց բազմաթիւ ձե-
ւերով հանդէս են գալիս կաւից եւ յախձ-
ապակուց » (էջ 170բ): Ղաֆաղարեան,
որ այլուր ալ այդ կարծիքը կը յայտնէ,
որոշ կերպով կը սխալի: Նախ, եթէ պը-
ղնձէ ամաններ գոյութիւն չունէին ի
Դուին, ուրեմն ի՞նչ բանի մէջ Դուինցիք
կ'եռացնէին ջուր, կ'եփէին կերակուր:
Եթէ Դուինի մէջ, պեղումներու ժամա-
նակ, կարելի չէ եղած պղնձէ խոշոր տը-
նային իրեր գտնել, առոր պատճառը շատ
հաւանաբար քաղաքին հետզհետէ կործա-
նումը եւ ամայանալն է: Քաղաքին այս
կամաց կամաց անկումին պատճառով
բնակիչները իրենց հեռացած ատեն՝ ի-
րենց հետ տարած կրնան ըլլալ պղնձեայ
իրերը, կամ թէ քաղաքը աւերող կամ
աւարող հորդանները իբր ցանկալի իր՝
իրենց կողոպուտին հետ տարած ըլլան:
Պղնձեայ իրերը թաղուած, պահուած
չէին յաճախ, որով կողոպուտի պա-
տրաստ իրեր էին: Պղնձէ իրերը դժբախ-
տութիւնը ունեցած են անգործածելի ըլ-
լալէ վերջ՝ հալեցուելու, մինչ բրուտա-
գործական իրերը նոյնիսկ կտոր կտոր ըլ-
լալէ վերջ՝ դեռ կարելի է գտնել պեղում-
ներու ընթացքին: Պղնձագործական հայ-
կական իրեր, որոնք այնքան մեծ համ-
բաւ մը ունէին հին ատենները, հաղիւ
փէ. դարուն կը համին հնութեամբ, իսկ
ատկէ աւելի հինքը շատ հազուադիւս են:
Կը խորհիմ թէ շատ վիճելի է Ղաֆաղա-
րեանի եզրակացութիւնը, թէ «Մեր տե-
սակէտն այն է, որ պղնձագործութիւնը,
իրբեւ ինքնուրոյն արհեստ Դուինում շատ